ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՔԻՄԻԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2026 Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի ԹԻՎ 11 ՆԻՍՏԻ

Օրակարգում՝

1. Ամբիոնի վարիչների հաղորդումը քննաշրջանի ընթացքի և արդյունքների քննարկում:
2. Մագիստրոսական ծրագրերով ուսուցման վիճակի մասին ամբիոնների վարիչների հաղորդումների լսում:
3. Մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքները:
4. Ընթացիկ հարցեր:

Քիմիայի ֆակուլտետի դեկան Ա.Ս.Գալստյանը ներկայացրեց օրակարգը նշելով, որ օրակարգում իրականացվել է որոշակի փոփոխություններ՝ սոց. Հարցման արդյունքների տվյալների քննարկումը տեղափոխվել մարտ ամսվա օրակարգ, քանի որ հարցման տվյալների մշակումը տևելու է մինչև այս ամսվա 22-ը:

Հ.Շիլաջյանը հավելեց,-«Տվյալների ուշ ցուցադրումը դասախոսների մոտ պայմանավորված է այն հանգամանքով-ՏՏ կենտրոնը օրական կարողանում են մշակել 2000 նամակ»

Գ.Ս.Գրիգորյան,- բազմիցս խնդրել ենք, որ սոց. հարցումը ուսանողների շրջանակում իրականացնեն քննական շրջանի ավարտից հետո: Քանի որ քննության գնահատականները ազդում են հարցման արդյունքների վրա: Միայն մեկ ուսանողով հարցման տվյալը շատ սուբյեկտիվ է և հստակ չի:

Ա.Ս.Գալստյան – Ես այդ հարցին կանդրադառնամ և հետևողական կլինեմ գործընթացին:

ՈւԽ նախագահ – Էմմա Վարդանյան

-Մենք ուսանողներին՝ մասնավորապես առաջին կուրսեցիներին բացատրել ենք հարցմանը մասնակցելու անհրաժեշտությունը և նպատակը: Նրանք բավականին ակտիվ մասնակցել են: Ուսանողների մի մասը նշում են, որ հարցման արդյունքները իրենց մոտ չեն հաստատվել:

Քիմիայի ֆակուլտետի դեկան, դոցենտ Ա.Ս. Գասլստյան ,- Այժմ լսենք ամբիոնի վարիչների հաղորդումը քննաշրջանի ընթացքի վերաբերյալ,

Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի վարիչ, դոցենտ Գ.Ս.Գրիգորյան- Ամբիոնում քննական շրջանը ընթացել է հարթ, 2-րդ և 3-րդ կուրսում ունեինք լուծարքներ, որոնց մի մասը մարվել է առաջին լուծարքային շրջանում: Սակայն ամբիոնում ունենք ևս երկու ուսանող, որոնց մոտ խնդիրը այլ է նրանք ունեն ամբողջ կուրսի կրկնողություն:

Օրգանական քիմիայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ն.Ա.Դուրգարյան - Մեզ մոտ քննությունները ընթացել են նորմալ: Օրգանական քիմիա և ԲՄՄ քիմիա առարկաներից Ունենք անբավարար ստացած կամ քննությանը չներկայացած ուսանողներ: Առաջին լուծարքի շրջանում նրանցից մի մասը հաղթահարել է անցողիկ դրականի շեմը:

Անալիտիկ և անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչ Ա.Ի.Մարտիրյան, - նույն վիճակն է նաև մեր ամբիոնում: Լուծարքի առաջին փուլում ուսանողների մի մասը ստացել են դրական գնահատական:

Լ.Ս.Գաբրիելյան- «Քիմիա» բակալավրի ծրագրի ղեկավար

Ես ուզում եմ Ձեր ուշադրությունը հրավիրել «Փիլիսոփայություն»-առարկայի ստուգարքին: Ուսանողների մեծ մասը չեն ստացել. Այստեղ խախտվում է ստուգարքի ընթացակարգը՝ ըստ մասնագրի ստուգարքի համար տրվում են 3 հարց, սակայն այստեղ հարցերը եղել են ավելի շատ, բավականին խիստ:

Ա.Ս.Գալստյան – փիլիսոփայության ստուգարքին ես ուշադիր կլինեմ: Սակայն ուզում եմ ՈՒԽ նախագահին հիշեցնել որ յուրաքանչուր քննական առարկա քննությունից առաջ ունի խորհրդատվության օրեր և մեր դասախոսները սպասում են ուսանողներին: Որպես կանոն այդ օրերին և ընդհանրապես խորհրդատվության համար դասախոսներին մոտենում են այն ուսանողները՝ ովքեր բավականին լավ տիրապետում են առարկան.

Խնդրում եմ «Քիմիա» բակալավրի և մագիստրոսական ծրագրերի ղեկավարներին ուսանողներին հիշեցնել, որ այն ուսանողները որոնք սովորում են անվճար և երկրորդ լուծարքով չեն ստանում դրական գնահատական՝ մեխանիկորեն զրկվում են տարկետման իրավունքից:

Նիստի նախագահ Ա.Ս.Գալստյան օրակարգի երկրորդ հարցին անցնենք՝

Մագիստրոսական ծրագրերով ուսուցման վիճակի մասին ամբիոնների վարիչների հաղորդումների լսում:

Ամբիոնի վարիչները նշեցին, որ մագիտրոս առաջին կուրսի ուսանողների միակ բացասական կողմը դասերին չներկայանալն է, որը պայմանավորված է աշխատանքով:

Ա.Ս.Գալստյան- Հարգելի գործընկերնե՛ր, ուշադրություն դարձրեք բացակայությունների վրա. Եղեք զգոն. Դուք բազմաբաղադրիչ գնահատման համակարգում կարող եք մասնակցության համար միավորներ նշանակել և լաբորատոր աշխատանքներից 70% բացակայության դեպքում կարող եք թույլ չտալ ընթացիկ քննության:

Օրակարգի 3-րդ հարցը վերաբերվում է մագիստրոսական թեզերի պաշտպանության հարցին.

Ն.Ա.Դուրգարյան – ընդհանուր առմամբ պաշտպանությունները լավ անցան. Ուսանողները պատրաստված էին և տիրապետում էին իրենց կատարած աշխատանքներին: Բոլոր աշխատանքների փորձարարական մասը նույն մակարդակի վրա էին, Նախորդ տարիների նման տարբեր մակարդակների վրա չէին, որը բերում էր լրացուցիչ քննարկումների:

Ա.Ս.Գալստյան – այստեղ մի դիտարկում ես ունեմ,- Պետք է գրելառճի մեջ որոշակի փոփոխություններ մտցնենք, որպեսզի բոլոր աշխատանքները միանման ձևակերպված լինեն: Որոշենք փորձարարական մաս, արդյունքների քննարկում: Սա ընթացիկ հարց է և կարծում եմ մինչև մյուս պաշտպանությունը ամենինչ կարգավորված կլինի:

Նիստի նախագահ Ա.Ս.Գալստյան –Ընթացիկ հարցեր բաժնում ունենք մի քանի հարցեր

1. Անվանական կրթաթոշակի հարցը.
2. Թեմատիկ դրամաշնորհների ընթացիկ հաշվետվություն
3. Մեկ դրամաշնորհի հայտի ներկայացում

Լսեցին – Քիմիայի ֆակուլտետից անվանական կրթաթոշակ նշանակելու հարցը:

Որոշեցին - Շարունակել «Սննդի անվտանգության» բաժնի բակալավրիատի 4-րդ կուրսի գերազանց առաջադիմությամբ ուսանողուհի Էմիլիա Ալեքսանդրի Երիցյանին «Աիդա Ավետիսյանի» անվան կրթաթոշակը:

Լսեցին – Քիմիայի ֆակուլտետից անվանական կրթաթոշակ նշանակելու հարցը:

Որոշեցին - Շարունակել «Քիմիա» բաժնի բակալավրիատի 3-րդ կուրսի գերազանց առաջադիմությամբ ուսանողուհի Զեմֆիրա Արտավազդի Հովհաննիսյանին «Ստեփան Ղամբարյանի» անվան կրթաթոշակը:

Լսեցին – Քիմիայի ֆակուլտետից անվանական կրթաթոշակ նշանակելու հարցը:

Որոշեցին - Շարունակել «Քիմիա» բաժնի բակալավրիատի 3-րդ կուրսի գերազանց առաջադիմությամբ ուսանող Արեն Արկադիի Կիրակոսյանին «Դավիթ և Նազելի Չարչյանների» անվան կրթաթոշակը:

Թեմատիկ դրամաշնորհների ընթացիկ հաշվետվությունների քաղվածքները և դրամաշնորհի հայտի ներկայացման եզրակացությունը կցվում են:

Նիստի նախագահ,
Քիմիայի ֆակուլտետի դեկան Ա.Ս.Գալստյան

Նիստի քարտուղար,
Դոցենտ Մ.Ա.Սամվելյան